



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

17 ԱՊՐԻԼԻ 2020 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Մանասերյանը, Գեղամ Մարգարյանը, Էմիլ Սարգսյանը, Գեղամ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի օգնական Արմեն Ստեփանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, առաջատար մասնագետ՝ Սամվել Օրդոյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝
Մարինե Հովհաննիսյանը:**

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 17-ի թիվ 3 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:
3. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:
4. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 1.0057 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքը աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին:
5. <<Քաղաքացու բյուջե>> ենթադրամաշնորի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները հաստատելու և համայնքի ներդրման չափ սահմանելու մասին :
6. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:
7. <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ին կալցիումի հիպոքլորիդ տրամադրելու մասին:
8. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի բարեկարգման համար Աշոտ Մնացականյանին թույլտվություն տալու մասին:
9. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 50 հա արոտավայրը վարձակալության տրամադրելու համար համաձայնություն տալու մասին:
10. Գլաձորի համայնքապետարանի միջոցներով ձեռք բերված գարու սերմացուի բաշխման համար թույլտվություն տալու մասին:
11. Գլաձորի համայնքապետարանի հաշվեկշռում առկա մետաղական խողովակներից օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:
12. Գլաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության հենասյուններով մալուխային գծերի անցկացման համար <<ԳՈՒԴԼԱՅՆ>> ՍՊԸ-ին թույլտվություն տալու մասին:

13. Գլաձոր համայնքի կողմից 2020 թվականին ներկայացվող սուբվենցիայի ծրագրային հայտերին համաձայնություն տալու մասին:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29/

Լսեցին.

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստան Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1. Պակասեցնել գործառնական դասակարգման՝

04.02.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4251 /շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում/ հոդվածից 1841.0 /մեկ միլիոն ութ հարյուր քառասունմեկ հազար/:

2. Ավելացնել գործառնական դասակարգման՝

ա) 01.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4213 /կոմունալ ծառայություններ/ հոդվածին 40.0 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:
բ) 04.02.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4657 /այլ կապիտալ դրամաշնորհներ/ հոդվածին 601.0 /վեց հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ և 4262 /գյուղատնտեսական ապրանքներ/ հոդվածին՝ 1200.0 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ն/